

ՀԱՅԱԴԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

UTUDJIAN EDOUARD, *Les monuments arméniens du IV^e siècle au XVII^e siècle*. Paris, Editions Albert Morancé, 1967, 179 pp. ill.

Սփյուռքահայ անվանի ճարտարապետ էդվարդ Ությանյանի վերջին աշխատությունն է, որը նվիրված է հայկական հուշարձանների ճարտարապետության հարցին: Գրքում ուսումնասիրվում է IV—XVII դարերի հայկական ճարտարապետությունը: Գրքի հեղինակը 1957—1964 թթ. մի քանի անգամ ճանապարհորդել է Սովետական Հայաստանում և նկարահանել շուրջ 1000 տեսարաններ հին և ժամանակակից Հայաստանից: Աշխատության սկզբում հեղինակը տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի պատմության զանազան ժամանակաշրջանների մասին: Գրքի ներածությունը նվիրված է հայ ճարտարապետության մասին արևմտյան մասնագետների կարծիքին: Անվանի մարդկանց վկայություններից կատարած մեջբերումներով մատնանշվում է հայկական ճարտարապետական հուշարձանների նշանակությունը: Գրքում քննարկման նյութ են

դարձել հայ ճարտարապետական հուշարձանների զխավոր տեսակների, նրանց շինարարական տեխնիկայի, արվեստագիտական արժանիքների հարցերը: Հրատարակության զխավոր մասը ըզբաղեցնում են էջմիածնի, Հոփսիմեի, Գորիսի, Արինբերդի, Գառնու, Երեբունյքի, Օձունի, Աշտարակի, Պտղնիի, Շողակաթի, Զվարթնոցի, Մաստարայի, Հաղբատի, Գոշավանքի, Մարմաշենի, Սանահինի, Աղթամարի, Տաթևի, Անիի, Սևանի, Հաղարծինի, Խնչառուքի, Ամբերդի, Բջնիի, Ջեղարդի և այլ ճարտարապետական կարևոր հուշարձանների 250 միագույն և գունավոր նկարները, այդ հուշարձանների հատակագծերը և զարդաքանդակները՝ հաճախ նաև առանձին դետալներով: Վերջում, 169—179 էջերում տրված է (Ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և հայերեն) մատենագիտական աղբյուրների այբբենական ցանկը՝ ավելի քան 400 անուն:

Armenians in Australia and New Zealand. Compiled and arranged by Father Aramais Mirzaian. Sydney, 1966, 158 pp. ill.

«Հայերը Ավստրալիայում և Նոր Զելանդիայում» ժողովածուն ուղագրով մի հրատարակություն է գաղութահայ կյանքի մասին: Գիրքը բաղկացած է յոթ գլուխներից: Ներածությունից հետո «Հայաստանը և նրա ժողովուրդը» գլխում համառոտակի ներկայացված են Հայաստանի պատմությունը և մշակութային վերելքը: Երրորդ գլխում (էջ 22—139) կենսագրական տեղեկություններ են տրվում գաղութի ականավոր մարդկանց մասին: Նկատի ունենալով, որ Ավստրալահայ գաղութը կազմվել է հիմնական-

նում հնդկահայ գաղութի հիման վրա, հնդկահայ գաղութի և նրա մշակութային գործունեության պարզաբանման է նվիրված գրքի հինգերորդ գլուխը, որը կրում է «Հայերը Հնդկաստանում և հարավ-արևելյան Ասիայում» խորագիրը (էջ 180—217): «Հայկական մեծ ողբերգությունը» գլխին հաջորդում է ժամանակակից Հայաստանին նվիրված եզրափակիչ գլուխը: Գիրքը նկարազարդված է: Յոթերորդ գլխի նկարները պատկերում են Սովետական Հայաստանի ժամանակակից տեսեսական ու մշակութային վերելքը:

ADONTZ N. *Etudes arméno-byzantines*. Recueil d'études publiées dans Byzantion et autres periodiques. Lisbonne, Livraria Bertrand, 1965. 439 p. (Bibliothèque Arménienne de la Fondation Calouste Gulbenkian).

Նիկողայոս Ադոնցի «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ» հատորում վերահրատարակված են անվանի գիտնականի գիտական գործունեության հիմնականում բրյուսելյան շրջանի հետազոտությունները: Այսպես համալսարանի պրոֆեսոր Ժերար Գարիտը գրքի ներածականում համառոտակի տալիս է Ադոնցի կենսագրություն

ու նրա գիտական գործունեությունը՝ բարձր գնահատելով նրա ծառայությունները հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հատորում հրատարակված են 20—30-ական թվականներին «Byzantinische Zeitschrift», «Armeniaca», «Byzantion» և այլ գիտական պարբերականներում Ադոնցի հրապա-

րակած 13 աշխատությունները, այդ թվում «Դի-
գենիս Աքրիտաս բյուզանդական դուցազնեղու-
թյունը», «Բյուզանդիոնի կայսր Լևոն V-ի ծագ-
ման մասին», «Բարսեղ I կայսրի տարիքն ու
ծագումը», «Բյուզանդիայի կայսրեր Սորիկի և
Կոնստանտին V-ի լեգենդները», «Աշոտ Երկաթ

Հայաստանի թագավոր 915-ից 929 թվական-
ներին», «Հայ Սամվելը՝ բուլղարների թագա-
վոր», ինչպես նաև հայ-բյուզանդական պատ-
մական կապերին նվիրված ուսումնասիրությու-
ններ: Ժողովածուի վերջում զետեղված է հատուկ
անունների ցանկը (էջ 409—438):

SARKISYAN SARKIS, „L'Arménie d'aujourd'hui“. Préface d'Ar-
mand Lanoux. Paris, Editeur Jérôme Martineau, 1968, 160 pp.

Ֆրանսահայ ժուռնալիստ Սարգիս Սարգսյանը
երկու անգամ այցելել է Սովետական Հայաս-
տան և այդ ճանապարհորդությունների ժամա-
նակ ստացած տպավորությունները փաստական
տվյալների հետ միասին ամփոփել այս դրո-
քում: «Այսօրվա Հայաստանը» խորագիրը կրող
այս գրքում հեղինակը նկարագրում է հայ ժո-
ղովրդի առօրյա կյանքը, նրա ձգտումները և
հեռանկարները: Որպես բնաբան գրքի սկզբում
բերված է Ժան Ժորեսի հետևյալ խոսքը՝ «Ծա-
ռայել Հայաստանին, նշանակում է ծառայել
մարդկությանը»: Գրքի ներածականը՝ «Հայաս-
տանի ճանապարհը» խորագրով գրել է Արման

Լանուն, որտեղ համառոտակի տրված է հայ ժո-
ղովրդի անցած պատմական ուղին: Հեղինակը
մոտիկից ծանոթացել է ինչպես Հայաստանի տե-
սարժան վայրերի, այնպես էլ իր հայրենակից-
ների կյանքին: Գիրքը նկարագրողված է Հա-
յաստանի տնտեսական ու մշակութային վերելքը,
ժողովրդի երջանիկ կյանքը պատկերող լուսա-
նկարներով: «Հայաստանն այսօր նոր և երի-
տասարդ մի երկիր է, որտեղ համատարած ու-
րախություն է տիրում: Ես հայերին երջանիկ
տեսա», — եզրափակում է հեղինակը իր տպա-
վորությունները:

SANJIAN AVEDIS K. *The Armenian Communities in Syria under
Ottoman Dominion*. Cambridge, Massachusetts, Harvard University Press,
1965, 390 pp.

Հարվարդի համալսարանի հայոց լեզվի և
պատմության դասախոս Ավետիս Սանջյանի հե-
տաքրքիր և արժեքավոր մենագրությունն է, որը
վերնագրված է «Հայ համայնքները Սիրիայում՝
օսմանյան իշխանության ներքո» (1516—1918
թթ.): Գիրքը բաղկացած է 11 գլուխներից, ո-
րոնցում մանրամասն քննարկման են ենթարկված
հայերի պատմական կապերը Կիլիկիայի և Սի-
րիայի հետ՝ մինչև օսմանցիները, նկարագրված
է հայ գաղթականների տնտեսական և մշակու-
թային վիճակը Սիրիայում՝ օսմանյան տիրա-
պետության ժամանակ: Հատորը պարունակում
է նաև հարուստ տեղեկություններ Երուսաղեմի,
Կիլիկիայի և Հալեպի հայկական համայնքների

մասին: Մասնավորապես հանգամանորեն ուսում-
նասիրվում է Երուսաղեմի հայ պատրիարքու-
թյան պատմական զարգացումն ու ներքին կազ-
մակերպությունը: Մի առանձին գլուխ է հատ-
կացված XIX դարի քաղաքական դեպքերին
և հայկական հարցին: Չորսհարյուր տարվա
պատմական ժամանակաշրջանը ընդգրկող այս
ուսումնասիրությունը հավասարապես հետաքր-
քիր է թե հայերի և թե օսմանյան պատմությու-
նը ուսումնասիրողների համար: Գիրքը օժտված
է նաև օժանդակ ցանկերով՝ հայերեն և օտար
լեզուներով մատենագիտական ցանկ (էջ 289—
309), ծանոթագրություններ և հատուկ անուն-
ների ցանկ:

ԱԿՈՆՅԱՆ ՆԵՐՍԵՍ, *Տաղասացներ և տաղեր*: Վիեննա, Միխայելյան տպա-
րան, 1968: 292 էջ (Ազգային մատենադարան, հատոր ՄԵ):

Հայտնի հայագետի տարբեր ժամանակներում
գրած և անցյալում «Հանդես ամսօրյայի» էջե-
րում հրապարակված մատենագրական ուսումնա-

սիրություններն են, որոնք ի մի են ամփոփված
այս հատորի մեջ: «Տաղասացներ և տաղեր» ընդ-
հանուր խորագրի տակ զետեղված են համեմա-

տարար ավելի նվազ հիշատակված մատենագիրներ և քիչ ուսումնասիրված ստեղծագործություններ: Հատորի 13 գլուխներում ներկայացված են Ներսես Շնորհալին, Վարդան Բարձրբերդցին, Թորոս Մշեցին, Մաղաթիա Դերջանեցին, Թադեոս Կողոնիացին, Սաղաղա Ոստանցին, Բարսեղ Ավանեցին, Ստեփանոս Զիք Զուղայեցին, Հակոբ Բուզաւանը, Երզնկացի Հովհաննես Բշխա-

նը, Հովհաննես Սերաստացին, Մանվել Բջնեցին և Քաջն Լիպարիտը: Այդ հեղինակների կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրման և մասսայականացման գովելի մի ձեռնարկ է այս վերահրատարակությունը, որի մեջ տեղ են գտել նաև նրանց գործերից բազմաթիվ մեջբերումներ և ամբողջական արտատպումներ:

ՊՈՂԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ: Մալր Յուդակ Զեռագրաց Սրբոց Հակոբյանց: Հատոր երրորդ: Երուսաղեմ, Տպարան Սրբոց Հակոբյանց, 1968: 648 էջ, նկարազարդ:

Այս հատորում նկարագրված են Երուսաղեմի մատենադարանի 400 ձեռագրեր, որոնցից 223-ի ցանկը լույս է ընծայվում առաջին անգամ: Հատորում նկարագրված որոշ ձեռագրերից զետեղված են մանրանկարչական և զարդադրական միագույն նմուշներ, որոնք գաղափար են տալիս էկարողների արվեստի մասին: Տպագրված են

նաև 27 բնագիրներ, որոնք, ինչպես գրում է կազմողը իր բացատրականում, «կենդանացնեն մեծ շահեկանություն պատմական, մատենագրական և այլ տեսակետներ»: Գիրքն ունի նաև խնամքով պատրաստված օժանդակ ցանկեր (ժամանակագրական ցուցակ, հատուկ անունների ցանկ, տեսակավորված բովանդակություն):

ՍԻՄՈՆՅԱՆ Գ. Հ. Հուշամատյան Պոնտական Ամասիո: Վենետիկ, 1967. 1038 էջ, նկարազարդ:

Երկարամյա աշխատանքի արդյունք հանդիսացող այս մեծածավալ հրատարակությունը բաղկացած է ներածությունից և ութ մասերից: Ներածականում գրքի հեղինակը նշում է, որ վերնագրում «Պոնտական» մակդիրը գործածել է, նկատի ունենալով, որ Սովետական Հայաստանում այժմ կա Ամասիա ավան: Գրքում ի մի են բերված Ամասիայի և մասամբ շրջակա քաղաքների հին ու նոր պատմությունը, ազգագրությունը, ժողովրդական բարքերն ու ավանդությունները, տեղեկագրությունը, գավառաբարբառի գանձարանը և այլն: Մանրամասն ներկայացված է Ամասիայի հայ կյանքը՝ իր քաղաքական ու սոցիալական, եկեղեցական ու ըրժրչական, կրթական ու մշակութային կողմերով: Հուշամատյանի առաջին մասում («Պատմական ընդհանուր տեսություն», էջ 13—245) մանրամասնորեն ներկայացված է Ամասիայի պատմությունը՝ օտար պատմագիրներից բազ-

մաթիվ քաղվածքներով, երկրորդ մասում հնախոսական, տեղագրական, բժշկական, եկեղեցապատմական տեղեկություններ են տրվում Ամասիայի մասին: Քաղաքի սոցիալական և մշակութային կյանքին է նվիրված գրքի երրորդ մասը: Հուշամատյանի հետագա մասերը կրում են հետևյալ վերնագրերը. «Եղեռնապատում, Ամասիոյ տեղահանություններն ու ջարդերը» (էջ 649—787), «Ազգային աղետեն վերջ» (էջ 788—853), «Գրական բաժին» (էջ 854—871), «Ազգագրական բաժին՝ բարքեր ու սովորություններ, ընտանեկան և գավառական կյանք» (էջ 872—934), «Ամասիոյ հայոց գավառաբարբառը» (էջ 935—1017): Այս հուշամատյանի հրատարակությամբ Թուրքիայի երբեմնի հայաբնակ քաղաքների պատմությանը նվիրված մատենաշարը համալրվեց մի նոր և բարեխիղճ ուսումնասիրությամբ:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ